ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՔ-ՀԲՄԽԱՇՁԲ-22/55

ք. Երևան « 22» նոյեմբեր **2022թ.**

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետի ժամանակավոր պաշտոնակարար Ի. Օսիպյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷՅ ՎԻ ԷՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Գ. Բեզիրջյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է՝ **Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների** կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ նախագծողը՝

1) շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմում է օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնում է կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնում է աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնում է հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **1400000** (մեկ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի **30** (երեսուն) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի **0,18** (զրո ամբողջ տասնութ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է **Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:**

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**Կատարող**
Երևանի քաղաքապետարան	«Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտի փող. 1	ք. Երևան, Փ. Բուզանդի 1/3
Կենտրոնական գանձապետարան	«Էվոկաբանկ» ՓԲԸ
ՀՀ 900032313042	Հ/Հ՝ 1660001274300100
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ՝ 02707077
Ի. Օսիպյան----------(ստորագրություն)	Գ. Բեզիրջյան----------(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« 22 » նոյեմբեր 2022 թ. կնքված
ԵՔ-ՀԲՄԽԱՇՁԲ-22/55 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ

ՀՀ դրամ

Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Հ/Մ	միավոր գինը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	ժամկետը
3	71241200/1370	**Արաբկիր Վ/Շ վթարային պատշգամբների հիմնանորոգման աշխատանքների համար առաջադրվում է՝** 1. Տիգրանյան 6 շ. բն 22 2. Մամիկոնյանց 25 շ. բն. 49, 47, 16, 17 3. Կոմիտաս 45 շ. բն. 22, 18, 21, 19, 20 4. Խաչատրյան 10 շ. բն. 44, 7, 5, 41, 39, 16, 14 5. Գյուլբենկյան 22 շ. բն. 17, 34, 39 6. Բաղրամյան 89 շ. բն. 12 7. Կոմիտաս 54 շ. բն. 148 8. Զարյան 21 շ. բն. 49 9. Գրիբոյեդով 7 շ. բն. 5, 7, 14 10. Խաչատրյան 29 շ. բն. 38 11. Խաչատրյան 26/3 շ. բն. 62 12. Կոմիտաս 27/1 շ. բն. 28, 31 13. Կոմիտաս 3 շ. բն. 13 14. Շիրվանզադե 15/32 շ. բն. 13, 16, 18, 28, 15. Տոլբուխին 33/19 շ. բն. 14, 19 16. Կիևյան 12 շ. բն. 32 17. Կասյան 12 շ. բն. 73 18. Տիգրանյան 14 շ. բն. 59, 62 19. Շահսուվարյան 4 շ. բն. 9 20. Շահսուվարյան 6 շ. բն. 5 21. Մամիկոնյանց 15 շ. բն. 24 22. Քանաքեռ ՀԷԿ 6 շ. բն. 23 23. Քանաքեռ ՀԷԿ 9 շ. բն. 18 24. Վաղարշյան 22 շ. բն. 24, 29	դրամ	820000	820000	1	Արաբկիր վարչական շրջան	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 21-րդ օրացուցային օրը ներառյալ

		25. Կոմիտաս 26 շ. բն. 82, 86 26. Կոմիտաս 30 շ. բն. 6, 7 27. Քոչար 27 շ. բն. 6, 9, 20, 25 28. Քոչար 25 շ. բն. 8, 23, 26, 29, 38 29. Վաղարշյան 12 շ. բն. 5, 14, 29, 35, 41 30. Քոչար 23 շ. բն. 23 31. Բաղրամյան 33ա շ. բն. 12 32. Բաղրամյան 51շ. բն. 16, 18, 20, 22, 25, 27, 28 Ներկայացնել պատշգամբների տեխնիկական վիճակի գործիքային եղանակով հետազննության անցկացման և եզրակացություններ (սեյսմիկ եզրակացություն): Իրականացվում է լիցենզավորված կազմակերպության կողմից: 1. Ներկայացնել բեբոնի մաշվածության աստիճանը, 2. Ներկայացնել կրող կոնստրուկցիայի ուժեղացման եղանակները և տարբերակները, 3. Ներկայացնել նաև հետազզնության արդյունքում հայտնաբերած թաքնված դեֆեկտները: Սեյսմիկ եզրակացությունը ներկայացնել 3 օրինակից: Կազմել նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փաթեթ: 1. Տեխնիկական եզրակացություն փաստացի իրավիճակի և սեյսմիկ անվտանգության իրավիճակի (անհրաժեշտության դեպքում ձեռք բերել տեխնիկական եզրակածություն) մասին 2. Տեխնիկական առաջադրանք – Անհրաժեշտության դեպքում՝ պատշգամբների կերամիկական սալերի, պաշտպանիչ շերտերի, բետոնե շերտի մասնակի քանդում;– Շին. աղբի տեղափոխում;– Ե/բ սալերի վնասված հատվածների բետոնացում, անհրաժեշտության դեպքում՝ քանդում և նորի կառուցում; – Ջրամեկուսիչ շերտի իրականացում; –Ցեմեն-ավազե սվաղում, անհրաժեշտության դեպքում մետաղական ցանցի օգտագործմամբ; -Սվաղված մակերեսի ներկում;– Մետաղական ճաղաշարերի վերանորոգում և ներկում: – Հաշվի առնել Երևան քաղաքի ավագանու 16.03.2012թ. հ.405-Ն որոշմամբ սահմանված շին.հրապարակների ժամանակավոր պատնեշով առանձնացման և տեղեկատվական վահանակների տեղադրման կետը: 3. Ներկայացնել մանրամասնորեն կատարված ուսումնասիրությունների արդյունքում հիմնավորված աշխատանքային ծավալներ: 4. Նախագիծը ներկայացնել 7 օրինակից; 5. Տեխնիկական եզրակացության արդյունքներին համաձայն ներկայացնել ա/ Կազմել նախագծա-նախահաշվային փաստաթղթեր համաձայն թերությունների ակտի, նախնական համաձայնության:բ/ Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը կազմել գործող նորմերի պահանջներին համաձայն:						

		6. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը ներկայացնել 7 օրինակից: 7. Նախագծա –նախահաշվային փոստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել Երևանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի Քաղաքաշինության և հողօգտագործման և Կոմունալ տնտեսության և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժինների հետ: 8. Նախագծա -նախահաշվային փաստաթղթերը ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով: 9. Նախագծերը ներկայացնել նաև ռուսերեն տարբերակով առանձին՝ հայերեն և ռուսերեն: 10. Ներկայացնել օբեկտի, դրա առանձին մասերի /կոնստրուկցիաներ և այլն/ և օգտագործվող նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները11. Աշխատանքների դիմաց վճարումը կատարվելու է փորձաքննության դրական եզրակացություն տրամադրվելուց հետո:						
4	71241200/1371	**Ա.Խաչատուրյան փողոց, 4-րդ շենքի դիմացի երկայնքով և դեպի տնատիրություններ տանող հատվածի հենապատ** Արաբկիր Վ/Շ տարածքում գտնվող հենապատերի վերանորոգման աշխատանքների համար անհրաժեշտ է կազմել նախագծանախահաշիվ գործող նորմերի պահանջների համաձայն: Նախագծման աշխատանքներում հաշվի առնել հենապատերի տեխնիկական վիճակի գործիքային եղանակով հետազննության անցկացման և եզրակացությունների (սեյսմիկ եզրակացության) եզրակացության արդյունքները: Հենապատի տեխնիկական վիճակի գործիքային եղանակով հետազննության անցկացման և եզրակացության (սեյսմիկ եզրակացության) տրամադրում: (իրականացվում է լիցենզավորված կազմակերպության կողմից): Ներկայացնել տեղազննման ընթացքում հայտնաբերված և տեխնիկական առաջադրանքում չզետեղված բոլոր տիպի լրացումների և փոփոխությունների առաջարկություններ: Ներկայացնել հենապատի ընթացիկ վիճակը (կցել նաև լուսանկարներ): 1. Ստուգել հենապատի փաստացի տեխնիկական վիճակը: 2. Հենապատի շինարարության ընթացքում կիրառված կոնստրուկտիվ լուծումները: 3. Բետոնի մաշվածության աստիճանը: 4. Գայլիկոնների վիճակը: 5. Հիմքի ընթացիկ վիճակը: 6. Ցամաքուտդային խողովակների մաքրությունը: 7. Հետազննության ընթացքում նկատված այլ թերություններ: Սեյսմիկ եզրակացության փաստաթղթերը ներկայացնել 3 օրինակից: **Հենապատի նախագծման Տեխնիկական առաջադրանք 1. Ներկայացնել տեղազննման ընթացքում հայտնաբերված**	դրամ	290000	290000	1	Արաբկիր վարչական շրջան	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 21-րդ օրացուցային օրը ներառյալ

		բոլոր տիպի լրացումների և փոփոխությունների առաջարկություններ կցելով համապատասխան լուսանկարներ: Կազմել թերությունների ակտ, (տեխնիկական եզրակացություն) որում սպառիչ ներկայացնել հենապատերի առկա վիճակը և նախատեսվող աշխատանքների ծավալները ու տեսակները, մասնավորապես՝ ա/ Հենապատերի վնասված ու մաշված հատվածները և մակերեսը, անորակ նյութերի առկայությունը և հատված առ հատված վերանորոգման անհրաժեշտությունը: բ/ գրունտային ջրերի հեռացման համակարգի առկայությունը և դրա պիտանելությունը շահագործման: Անհրաժեշտության դեպքում նախագիծ-նախահաշում նախատեսել դրենաժային համակարգի մոնտաժում: գ/ անհրաժեշտության դեպքում հատվածային կամ լիովին ուժեղացնել հենապատի կոնստրուկցիան: դ/ Հենապատերի վրա և անմիջապես կից աճած խոտաբույսերի մաքրում և ծառերի կտրում: ե/ Նախատեսել հենապատերի բարձրացում (եթե կա դրա կարիքը): Ներկայացնել առաջարկություններ և նախագիծ: Հենապատի վերևում նախատեսել բազրիքներ՝ նոր կառուցվող և գոյություն ունեցող հենապատերի վրա: զ/ Նախահաշիվ-ծավալաթերթում նախատեսել շինաղբի տեղափոխում 12 կմ հեռավորության վրա և (անհրաժեշտության դեպքում) սևահողի մատակարարում 35 կմ հեռավության վրա գտնվող վայրից: **2. Անհրաժեշտ է իրականացնել հետևյալ աշխատանքները՝** ա/ քայքայված սվաղի քանդում, բ/ քանդված շին.աղբի հավաքում, բարձում ա/մ և տեղափոխում, գ/ մետաղական ցանցի տեղադրում, դ/ նոր ց/ա բարձրորակ սվաղի իրականացում, ե/ գրունտային ջրերի հեռացման համար համապատասխան խողովակների տեղադրում, զ/ պատրաստել հենապատերի բարձրացման համար համապատասխան նախագծեր, է/ հարող խոտածածկույթի մաքրում և ծառերի կտրում (համաձայնեցնելով կանաչապատման ՀՈԱԿ-ի հետ): Անհրաժեշտության դեպքում ոռոգման խողովակների համակարգի մոնտաժում՝ առաջնությունը տալ պլաստմասե խողովակներին իսկ կոշտ ծածկույթի տակ պողպատե խողովակների; **3. Նախահաշիվ-ծավալաթերթը կազմման ընթացքում քննարկել իսկ աշխատանքների ավարտից հետո համաձայնեցնել Պատվիրատուի հետ ներկայացնելով օգտագործվող նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները: 4. Նախահաշիվ-ծավալաթերթը ներկայացնել 7 օրինակից: 5. Նախահաշիվ-ծավալաթերթը ներկայացնել նաև ռուսերեն տարբերակով՝ առանձնացված հայերենը և ռուսերենը: 6. Նախահաշիվ-ծավալաթերթը ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով կամ ուղարկել պայմանագրում նշված էլեկտրոնային հասցեին՝ .xls (excel) ձևաչափերով: Աշխատանքային էլ-փոստ՝ arabkir@yerevan.am , arabkirnaxagic@gmail.com: 7. Աշխատանքների դիմաց վճարումը կատարվելու է**						

		փորձաքննության դրական եզրակացություն տրամադրվելուց հետո:						
5	71241200/1372	**Վրացական փողոց, 4-րդ նրբանցք, NN 5, 7 և 5/1 շենքերի դիմացի հենապատ** Արաբկիր Վ/Շ տարածքում գտնվող հենապատերի վերանորոգման աշխատանքների համար անհրաժեշտ է կազմել նախագծանախահաշիվ գործող նորմերի պահանջների համաձայն: Նախագծման աշխատանքներում հաշվի առնել հենապատերի տեխնիկական վիճակի գործիքային եղանակով հետազննության անցկացման և եզրակացությունների (սեյսմիկ եզրակացության) եզրակացության արդյունքները: Հենապատի տեխնիկական վիճակի գործիքային եղանակով հետազննության անցկացման և եզրակացության (սեյսմիկ եզրակացության) տրամադրում: (իրականացվում է լիցենզավորված կազմակերպության կողմից): Ներկայացնել տեղազննման ընթացքում հայտնաբերված և տեխնիկական առաջադրանքում չզետեղված բոլոր տիպի լրացումների և փոփոխությունների առաջարկություններ: Ներկայացնել հենապատի ընթացիկ վիճակը (կցել նաև լուսանկարներ): 1. Ստուգել հենապատի փաստացի տեխնիկական վիճակը: 2. Հենապատի շինարարության ընթացքում կիրառված կոնստրուկտիվ լուծումները: 3. Բետոնի մաշվածության աստիճանը: 4. Գայլիկոնների վիճակը: 5. Հիմքի ընթացիկ վիճակը: 6. Ցամաքուրդային խողովակների մաքրությունը: 7. Հետազննության ընթացքում նկատված այլ թերություններ: Սեյսմիկ եզրակացության փաստաթղթերը ներկայացնել 3 օրինակից: **Հենապատի նախագծման Տեխնիկական առաջադրանք 1. Ներկայացնել տեղազննման ընթացքում հայտնաբերված բոլոր տիպի լրացումների և փոփոխությունների առաջարկություններ կցելով համապատասխան լուսանկարներ:** Կազմել թերությունների ակտ, (տեխնիկական եզրակացություն) որում սպառիչ ներկայացնել հենապատերի առկա վիճակը և նախատեսվող աշխատանքների ծավալները ու տեսակները, մասնավորապես՝ ա/ Հենապատերի վնասված ու մաշված հատվածները և մակերեսը, անորակ նյութերի առկայությունը և հատված առ հատված վերանորոգման անհրաժեշտությունը: բ/ գրունտային ջրերի հեռացման համակարգի առկայությունը և դրա պիտանելությունը շահագործման: Անհրաժեշտության դեպքում նախագիծ-նախահաշում նախատեսել դրենաժային համակարգի մոնտաժում: գ/ անհրաժեշտության դեպքում հատվածային կամ լիովին ուժեղացնել հենապատի կոնստրուկցիան: դ/ Հենապատերի վրա և անմիջապես կից աճած խոտաբույսերի մաքրում և ծառերի կտրում: ե/ Նախատեսել հենապատերի բարձրացում (եթե կա դրա կարիքը): Ներկայացնել առաջարկություններ և նախագիծ: Հենապատի վերևում նախատեսել բազրիքներ՝ նոր կառուցվող և գոյություն ունեցող	դրամ	290000	290000	1	Արա Սարգսյան 5	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 21-րդ օրը ներառյալ

		հենապատերի վրա: զ/ Նախահաշիվ-ծավալաթերթում նախատեսել շինաղբի տեղափոխում 12 կմ հեռավորության վրա և (անհրաժեշտության դեպքում) սևահողի մատակարարում 35 կմ հեռավության վրա գտնվող վայրից: **2. Անհրաժեշտ է իրականացնել հետևյալ աշխատանքները՝** ա/ քայքայված սվաղի քանդում, բ/ քանդված շին.աղբի հավաքում, բարձում ա/մ և տեղափոխում, գ/ մետաղական ցանցի տեղադրում, դ/ նոր ց/ա բարձրորակ սվաղի իրականացում, ե/ գրունտային ջրերի հեռացման համար համապատասխան խողովակների տեղադրում, զ/ պատրաստել հենապատերի բարձրացման համար համապատասխան նախագծեր, է/ հարող խոտածածկույթի մաքրում և ծառերի կտրում (համաձայնեցնելով կանաչապատման ՀՈԱԿ-ի հետ): Անհրաժեշտության դեպքում ոռոգման խողովակների համակարգի մոնտաժում՝ առաջնությունը տալ պլաստմասե խողովակներին իսկ կոշտ ծածկույթի տակ պողպատե խողովակների; **3. Նախահաշիվ-ծավալաթերթը կազմման ընթացքում քննարկել իսկ աշխատանքների ավարտից հետո համաձայնեցնել Պատվիրատուի հետ ներկայացնելով օգտագործվող նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները: 4. Նախահաշիվ-ծավալաթերթը ներկայացնել 7 օրինակից: 5. Նախահաշիվ-ծավալաթերթը ներկայացնել նաև ռուսերեն տարբերակով՝ առանձնացված հայերենը և ռուսերենը: 6. Նախահաշիվ-ծավալաթերթը ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով կամ ուղարկել պայմանագրում նշված էլեկտրոնային հասցեին՝ .xls (excel) ձևաչափերով: Աշխատանքային էլ-փոստ՝ arabkir@yerevan.am , arabkirnaxagic@gmail.com: 7. Աշխատանքների դիմաց վճարումը կատարվելու է փորձաքննության դրական եզրակացություն տրամադրվելուց հետո:**						

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900032313042
ՀՎՀՀ 02593108

Ի. Օսիպյան_____
(ստորագրություն)
Կ.Տ.

Կ ա տ ա ր ո ղ
«Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ
ք. Երևան, Փ. Բուզանդի 1/3
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1660001274300100
ՀՎՀՀ՝ 02707077

Գ. Բեգիրջյան_____
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
« 22 » նոյեմբեր 2022 թ. կնքված
ԵՔ-ՀԲՄԽԱՇՁԲ-22/55 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
3	71241200/1370	Արաբկիր Վ/Շ վթարային պատշգամբների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	820000	820000	820000
4	71241200/1371	Ա.Խաչատուրյան փողոց, 4-րդ շենքի դիմացի երկայնքով և դեպի տնատիրություններ տանող հատվածի հենապատերի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	290000	290000	290000
5	71241200/1372	Վրացական փողոց, 4-րդ նրբանցք, NN 5, 7 և 5/1 շենքերի դիմացի հենապատերի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	⋮	290000	290000	290000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900032313042
ՀՎՀՀ 02593108

Ի. Օսիպյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Կ ա տ ա ր ո ղ
«Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ
ք. Երևան, Փ. Բուզանդի 1/3
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 16600012743001 00
ՀՎՀՀ՝ 02707077

Գ. Բեզիրջյան
(ստորագրություն)
Կ.Տ.

[redacted]

Հավելված 3
« » նոյեմբեր 2022 թ. կնքված
ԵՔ-ՀԲՄԽԱՇՁԲ-22/55 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » նոյեմբեր 2022 թ. կնքված
ԵՔ-ՀԲՄԽԱՇՁԲ-22/55 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը
Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը
պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՎՃԱՐՄԱՆ ՅԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ ԱՆԴՈՐԱԳԻՐ N 000315 [1879139763]
PAYMENT ORDER RECEIPT

ԷՎՈԿԱԲԱՆԿ ՓԲԸ Գլխամաս

ՊԿ\ID 586

Ամսաթիվ\Date 17/11/22 14:39

Դեբետ\Debit	Կրեդիտ\Credit	Գումար\Amount
1660001274300100	900008000664	AMD 170,000.00

Վճարող\Remitter
«ԷՅՎԻԷՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

Վճարողի բանկ\Remitter's Bank
ԷՎՈԿԱԲԱՆԿ ՓԲԸ

Վճարողի ՀՎՀՀ\Remitter's Tax Code 9902707077

Շահառու\Beneficiary
Հայտի և պայմանագրի ապահովումը բանկային երաշխիքով կամ կանխիկ փողի ձևով

Շահառուի բանկ\Beneficiary's Bank
Կենտրոնական գանձապետարան

Գումարը բառերով\Amount in Words
Մեկ հարյուր յոթանասուն հազար դրամ

Նպատակ\Details
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՒՄԱՐ// ԵՔ-ՅԲԽՄՄՀՁԲ -22/55

Գանձույթ I\Commission I	Հաշիվ\Account	Գանձման գումար\Commission
	1660001274300100	AMD 200.00

Գանձման գումարը բառերով\Commission in Words
Երկու հարյուր դրամ

Կատարող\Maker Նարե Կարապետյան

Կ.Տ.
ST.

ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ ՄՆԴՈՐԱԳԻՐ N 000314 [1072951133]

PAYMENT ORDER RECEIPT

ԷՎՈԿԱԲԱՆԿ ՓԲԸ Գլխամաս

ՊԿ\ID 586

Ամսաթիվ\Date 17/11/22 14:38

Դեբետ\Debit	Կրեդիտ\Credit	Գումար\Amount	
1660001274300100	900008000698	AMD	254,000.00

Վճարող\Remitter
«ԷՅՎԻԷՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

Վճարողի բանկ\Remitter's Bank
ԷՎՈԿԱԲԱՆԿ ՓԲԸ

Վճարողի ՀՎՀՀ\Remitter's Tax Code 9902707077

Շահառու\Beneficiary
Գնումների որակավորման ապահովում՝ կանխիկ փողի ձեւով, ՀՀ ֆինանսների նախարարություն

Շահառուի բանկ\Beneficiary's Bank
Կենտրոնական գանձապետարան

Գումարը բառերով\Amount in Words
Երկու հարյուր հիսունչորս հազար դրամ

Նպատակ\Details
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՒՄԱՐ// ԵՔ-ՀԲՄԽԱՇՁԲ -22/55

Գանձում I\Commission I	Հաշիվ\Account	Գանձման գումար\Commission	
	1660001274300100	AMD	200.00

Գանձման գումարը բառերով\Commission in Words
Երկու հարյուր դրամ

Կատարող\Maker Նարե Կարապետյան

Կ.Տ.
ST.

ՀԱՅՈՒ 00001182 Գրանցման համար 16600

«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ Գլխավոր գրասենյակ ՀՀ ք. Երևան (0010) Գանձապետական 4/2